# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արա Սահակյան Արթուրի ԱՁ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/39-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 16 | - | մարզական կոշիկ | - | Բոթաս սև, անճիթք Բաղկացած է կոշկերեսի քթամասից, հետևամասից, արտաքին գոտուց, փափուկ լեզվակից, հիմնական ներդիրից, մաշվածադիմացկուն ներբանից /տակացուից/ և հանովի-դնովի ներդիրից: Գույնը՝ ամբողջությամբ սև: Քթամասը մշակված է ձևավոր առաջամասով, օդափոխման արտաքին անցքերով: Լեզվակը ամրացված է առաջնամասին: Բոլոր դետալները իրար միացվում են սոսնձով և կարվում են մաշվածադիմացկուն թելով, որի կարը պետք է թույլ չտա ջրի և խոնավության ներթափանցումը կոշիկի ներսամասի դետալներ: Կոշիկի երեսացուն պետք է լինի խոշոր եղջերավոր անասունի կաշվից՝ սև գույնի, բարձր որակի, բնական, մշակված մակերեսով: Կոշիկը պետք է ապահովի օդափոխանակությունը, այսինքն՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | օդագոլորշանցիկությունը և ջերմահաղորդականաությունը, որը կապահովի քրտնակլանումը: Կողային արտաքին գծիկների հաստությունը 12մմ (կաշվին փոխարինող նյութից), կրունկի փափկեցնող վերնամասը՝ 1,4մմ, իսկ ներսի հատվածինը՝ 1,2մմ կաշվին փոխարինող նյութով, կրունկի ծիգ կանգնելու, ամրացման նյութը՝ չոր և փափուկ պոլիէթիլենի համադրումով: Տակացուն սև է , պոլիուրետանային: Քուղերը՝ ամուր, արհեստական թելերի համակցմամբ, ծայրակալները պոլիմերային նյութով, ամրացված: Ունի 6*2 անցք՝ կոշիկը թելելու համար: Ճիտքը և քթամասը կարակցված են կարով, որի ամրությունը առնվազն 150Ն/սմ է: Կրնկամաս-ը, ճիտքն ու հետևամասի արտաքին գոտին կարակցված են 2-4 կարով, որի ամրությունը առնվազն 115 Ն/սմ է: Ներբանն ամրանում է բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով: Ներբանի խզման բեռնվածությունը բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով ամրացման դեպքում առնվազն 110-120 Ն/սմ է: Ներբանը պետք է ապահովի չսայթաքելու գործոնը և ապահովի հետքերի զարդանախշերից հնարավորինս արագ ինքնամաքրումը: Կոշիկի աջ ու ձախ զույգը պետք է լինի միևնույն չափսերի, լայնության և կառուցվածքի: Մատակարար կազմակերպությունը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, պատասխանատու ստորաբաժանմանը պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքատեսակի երկուական զույգ՝ հսկման նմուշներ, մատակարարվող տեսականուց (նմուշը պետք է լինի 41 և 43 չափսի), որոնք պետք է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | համապատասխանեն տեխնիկական բնութագրում նշված պահանջներին: Ներկայացված նմուշները համաձայնեցվում է Պատվիրատուի հետ, որից հետո Պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի : Արտադրվում են 36-46 չափսերի: Փաթեթավորումը ստվաթղթե արկղերով, 1 արկղի մեջ մինչև 10 զույգ, արկղերը պետք է լինեն պիտակավորված (նվազագույնը 6սմ*10սմ չափսի), որի վրա պետք է տեսանելի նշված լինի տեսականու անվանումը, պայմանագրի կոդը, չափսը, մատակարար և/կամ արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, կրման /շահագործման/ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (8 ամիս), իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը անհատույց փոխարինել նորերով 30 օրացուցային օրվա ընթացքում: Փոխարինման ժամկետը սկսվում է հաշվարկվել պատվիրատուի կողմից գրավոր տեղեկացվելու հաջորդ աշխատանքային օրվանից: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ИП Ара Саакян Артурович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/39-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 16 | - | - | - | - |